



ՊՐՈՖԵՍՈՐ ՎԻԼԵՆ ԱՐՄԵՆԻ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՉԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

2008 թ. մայիսի 19-ին լրացավ ականավոր մանկաբույժ, գիտության վաստակավոր գործիչ, ՌԲԳԱ-ի թղթակից-անդամ, պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, Երևանի պետական բժշկական համալսարանի № 1 մանկաբուժության ամբիոնի բաժնի վարիչ՝ Վիլեն Արմենի Աստվածատրյանի 75- ամյակը:

Վ. Աստվածատրյանի աշխատանքային ուղին բազմազան է, բեղմնավոր և անբակտեիորեն կապված, հիմնականում, ԵրՊԲՀ-ի հետ:

Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետն ավարտելուց հետո (1956 թ.) Վ. Աստվածատրյանը մինչև 1958 թ. աշխատում էր Երևանի 2-րդ մանկական կլինիկական հիվանդանոցում՝ որպես մանկաբույժ: Այնուհետև ընդունվել է Մոսկվայի № 2 բժշկական ինստիտուտի ասպիրանտուրան և 1961 թ. հաջողությամբ պաշտպանել թեկնածուական թեզը՝ նվիրված երեխաների մոտ ռեմատիզմի հիմնախնդիրներին: 1961-1971 թթ. աշխատել է ԵրԲԻ բժիշկների վերապատրաստման ֆակուլտետի մանկաբուժության ամբիոնում՝ սկզբում ընթերակա, ապա՝ ամբիոնի ղոցենտ: Մոսկվայում (1967 թ.) պաշտպանելով դոկտորական թեզը՝ նվիրված երեխաների մոտ լեղուղիների պաթոլոգիայի հիմնախնդիրներին, ստացավ պրոֆեսորի կոչում, իսկ 1970 թ.՝ նույն ամբիոնի ճբաժնի վարիչ: Երեսուն տարուց ավելի, սկսած 1971 թ. մինչև իր կյանքի վերջը, Վ. Աստվածատրյանն եղել է ԵրԲԻ մանկաբուժության ամբիոնի անփոփոխ ղեկավարը և փաստորեն հանդիսացել է Հայաստանի Հանրապետությունում մանկաբուժությունը որպես գիտություն, հիմնադիրներից: Միաժամանակ սկսած 1973-1975 թթ. նա զբաղեցրել է պրոռեկտորի պաշտոնը, իսկ 1975-1987 թթ.՝ ԵրԲԻ ռեկտորի պաշտոնը:

Բազմավաստակ գիտնականը հանրապետությունում բժշկական կադրերի

պատրաստման գործում ունեցել է անմիջական մասնակցություն: Բազմակողմանի է եղել նրա բժշկական, հասարակական և գիտակրթական գործունեությունը: Սկսած



1976 թ. նա ղեկավարել է Գիտական կազմակերպությունը և Հայաստանի մանկաբույժներ ասոցիացիան: 1978-87 թթ., նաև 2002 մինչև 2006 թթ. եղել է ԵրԲԻ-ն կից «Մանկաբուժություն» թեկնածուական և դոկտորական թեզերի Մասնագիտացված խորհրդի նախագահը: Երկու տասնամյակ շարունակ եղել է հանրապետական և համամիութենական նշանակության բժշկական, գիտա-պրակտիկ հանդեսների (Փորձարարական և կլինիկական բժշկություն «Հայաստանի բժշկության պատմություն» համամիութենական նշանակության «Մանկաբուժություն» հանդեսների և այլն) խմբագրական խորհրդի անդամ:

Ամբիոնի վարիչության տարիներին նրա ղեկավարությամբ վերապատրաստվել են հազարավոր ուսանողներ, կլինիկական օրդինատորներ, ասպիրանտներ, այդ թվում՝ նաև արտասահմանից: Բժշկական միջավայրում նա հայտնի է եղել որպես հրաշալի կլինիցիստ, ի ծնե տրված անալիտիկ մտքով և բարձր բժշկական ինտուիցիայով ախտորոշող: Պրոֆեսոր Վ. Աստվածատրյանն իր կլինիկական և դասախոսական գործունեությունը հաջողությամբ զուգակցել է գիտական գործունեության հետ: Վ. Աստվածատրյանը հեղինակ է ավելի քան 260 գիտական աշխատանքների, այդ թվում՝ յոթ մենագրությունների և դասագրքերի: Նրա ղեկավարությամբ պաշտպանել են եղել 30 ատենախոսություններ, նրանցից հինգը՝



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ Հատոր 2, համար 2, 2008թ.



www.ysmu.am

դոկտորական: Նրա աշակերտներն այժմ զբաղեցնում են առաջատար դիրքեր հանրապետության և ԱՊՀ-ի երկրների մանկաբուժության բնագավառում: Նրա գիտական և աշխատանքային ծառայությունը բարձր է գնահատվել կառավարության կողմից, տրվելով նրան Պետական մրցանակ (1976թ.), ՅՍՍՀ (1981) գիտության վաստակավոր գործիչ, Ժողովուրդների բարեկամության օրդեն (1985թ.), ընտրելով նրան ՍՍՀՄ-ի ԲԳԱ-ի թղթակից-անդամ (1986թ.): 1996 թ. Ամերիկյան աշխարհագրական ինստիտուտի կողմից ընտրվել է «Տարվա Մարդ»:

Բազմակողմանի և լայնածավալ է եղել է պրոֆեսոր Վ. Աստվածատրյանի գիտական հետաքրքրությունը, որոնք ընդգրկում են մանկաբուժության տարբեր արդիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ ռևմատոլոգիայի, գաստրոէնտերոլոգիայի, պուլմոնոլոգիայի, ալերգոլոգիայի, երեխաների մոտ թարախա-սեպտիկ հիվանդությունները, ամփոփված նրա ղեկավարությամբ դասագրքերում, բազմաթիվ գիտական աշխատանքներում:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում պրոֆեսոր Վ. Աստվածատրյանի գիտական գործունեությունը նվիրված է եղել

հայկական էթնոսի համար երեխաների մոտ պերիոդիկ հիվանդությունների հիմնախնդիրներին: Դեռևս 1961 թ. Նա Հայաստանում առաջինը նկարագրեց երեխաների մոտ պերիոդիկ հիվանդության մասին, իսկ հետագայում (1991 թ.) իր փորձն ամփոփեց եզակի մոնոգրաֆիայով՝ «Երեխաների մոտ պերիոդիկ հիվանդությունը» ԵրԲԻ-ին կից թիվ 1 ամբիոնում (1987 թ.), նրա նախաձեռնությամբ, ՀՀ ուսումնասիրելու համար երեխաների մոտ պերիոդիկ հիվանդությունը կազմակերպվել է Պրոբլեմային լաբորատորիա, որը հետագայում, 1997 թ. Ազգային մանկական պերիոդիկ հիվանդությունների կենտրոնի համար դարձավ բազա:

Նա ապրեց երկրային 73 տարիներ...

Նա Հայաստանի բժշկության բնագավառում եղել է «Մարդ-Դարաշրջան»: Նրա աշխատանքային բոլոր գործունեությունը նվիրված է եղել երեխաներին: Նա ապրել և աշխատել է նրանց համար, հանուն նրանց առողջության: Մենք մշտապես կհիշենք նրան որպես իմաստուն և հոգատար ուսուցիչ, տաղանդավոր գիտնականի և ականավոր մանկաբույժի, բարձր ու վեհանձն կուլտուրայի տեր մարդու: